



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 15 » 08 2018թ.

No 06/3-3/50228-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ  
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ  
ԱՍՈՅԻԱՅԻԱ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ  
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ  
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 13.07.2018 թվականի  
թիվ Պ-41 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ  
հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 254-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ հանրային սննդի ոլորտում  
իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի  
օտարումը (այդ թվում՝ առաքմամբ) և (կամ) սպառման կազմակերպումը: Այդ  
գործունեությունը ներառում է նաև խոհարարական արտադրանքի սպառման



կազմակերպման հետ անմիջականորեն կապված ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, մասնավորապես՝ սպասարկումը, մուտքի թույլտվությունը:

- 258-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկը հաշվարկվում 6% դրույքաչափերով, իսկ Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից ՀՀ-ում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների օգտարմից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտների մասով՝ 20% դրույքաչափով,

- 258-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով նույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 11-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու ծախսերի, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օգտարման դեպքում՝ դրանք ձեռք բերելու ծախսերի) հանրագումարի երեք տոկոսը կազմող գումարի չափով: Եթե նույն մասով սահմանված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսը: Նույն մասի կիրառության իմաստով՝ ծախսերի մեջ ներառվում են նաև ձեռք բերվող կամ ներմուծվող ապրանքների համար վճարվող մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները:



ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N874-Ն հրամանով հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի համաձայն՝ «56 Հանրային սննդի կազմակերպում» հատվածը ներառում է անմիջական տեղում սպառման համար պատրաստի կերակրատեսակների, ինչպես նաև կերակրատեսակների հետ մատուցվող խմիչքների վաճառքը և սպասարկումը ռեստորաններում, սրճարաններում, այդ թվում՝ ինքնասպասարկման կամ պատրաստված սննդի դուրս տանելու հնարավորությամբ, վաճառասեղանի կանգնակի մոտ, նստելատեղերով կամ առանց նստելատեղերի: Որոշիչ գործոնն է՝ պատրաստի սննդի մատուցումը տեղում անմիջական սպառման համար, այլ ոչ թե սպասարկման հարմարավետությունը: Այստեղ չի ներառվում անմիջական կամ տեղում սպառման համար չնախատեսված պատրաստի սննդի արտադրությունը, ինչպես նաև սննդամթերքի, ինչպես նաև պատրաստի սննդի կամ մշակված սննդամթերքի իրացումը առևտրի կետերի միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերից բացառություն են կազմում և ենթակա չեն նվազեցման միայն հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերը ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, ինչպես նաև խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպման հետ անմիջականորեն չկապված՝ խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռք բերելու ծախսերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

 Recoverable Signature

X



VERIFIED OCSP 8/28/2018 21:18:11 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

